

**▶B**

**Խորհրդի 1999 թվականի ապրիլի 26–ի 1999/31/ԵՀ հրահանգ**

**Աղբավայրերի մասին**

(ՊՏ L 182, 16.07.1999, էջ 1)

**Փոփոխված՝**

		Պաշտոնական տեղեկագիր		
		համար	էջ	ամսաթիվ
<b><u>▶M1</u></b>	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 L 284 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 1882/2003 (ԵՀ) կանոնակարգ		1	31.10.2003
<b><u>▶M2</u></b>	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 L 311 թվականի հոկտեմբերի 22–ի թիվ 1137/2008 (ԵՀ) կանոնակարգ		1	21.11.2008

**▼B**

**Խորհրդի 1999 թվականի ապրիլի 26–ի 1999/31/ԵՀ հրահանգ**

**Աղբավայրերի մասին**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 130(ժթ)(1) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (2),

հաշվի առնելով Տարածաշրջանային հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

գործելով Պայմանագրի 189գ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն (4),

- 1) քանի որ թափոնների կառավարման քաղաքականության մասին Խորհրդի 1990 թվականի մայիսի 7–ի որոշումը (4) հավանություն է տալիս և աջակցում է Համայնքի ռազմավարական փաստաթղթին և Հանձնաժողովին առաջարկում է չափորոշիչներ և ստանդարտներ ներկայացնել՝ թափոններն աղբավայրում տեղադրելու համար,

2) քանի որ թափոնների կառավարման քաղաքականության մասին Խորհրդի 1996 թվականի դեկտեմբերի 9-ի որոշումը նախատեսում է, որ ապագայում Համայնքի տարածքում պետք է իրականացվեն աղբավայրի կառավարման աշխատանքներին առնչվող միայն անվտանգ և վերահսկվող գործողություններ,

3) քանի որ թափոնների գոյացման կանխարգելումը, վերամշակումը և օգտահանումը պետք է խրախուսվեն այնպես, ինչպես և վերականգնված նյութերի ու էներգիայի օգտագործումը, որպեսզի պահպանվեն բնական ռեսուրսները և կանխվի հողերի անխնա օգտագործումը,

4) քանի որ անհրաժեշտ է հետագայում ուշադրություն դարձնել կենցաղային և ոչ վտանգավոր թափոնների այրման, տիղմային նստվածքների վնասագերծման, մեթան գազի օգտահանման և կոմպոստացման խնդիրներին,

5) քանի որ, համաձայն «աղտոտողը վճարում է» սկզբունքի, պետք է ուշադրություն դարձնել աղբավայրից շրջակա միջավայրին հասցված ցանկացած վնասի,

6) քանի որ, ինչպես թափոնների մշակման ցանկացած այլ տարբերակ, թափոնների թաղման գործընթացը ևս պետք է վերահսկվի և կարգավորվի, որպեսզի հնարավոր լինի կանխել կամ նվազեցնել հնարավոր բացասական ազդեցությունները շրջակա միջավայրի վրա ու ռիսկը մարդու առողջության վրա,

7) քանի որ անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան միջոցառումներ, որպեսզի հնարավոր լինի խուսափել լքված թափոնների առաջացումից, դրանց թափումից կամ չվերահսկվող տեղադրումից. քանի որ պետք է, համապատասխանաբար, հնարավոր լինի դիտանցել թափոնների թաղման այն վայրերը, որոնք վերաբերում են այդտեղ թաղված թափոններում պարունակվող նյութերին. քանի որ նման նյութերը կարող են փոխազդել միայն տեսականորեն,

8) քանի որ պետք է հնարավորինս նվազեցնել թաղման համար նախատեսված թափոնների քանակն ու վնասակար բնույթը. քանի որ պետք է տեխնիկապես հեշտացնել թափոնների հետ աշխատանքը և մեծացնել դրանց օգտահանման ծավալները. քանի որ պետք է խրախուսել մշակման գործընթացի կիրառումը, որպեսզի հնարավոր լինի ապահովել, որ թափոնների թաղման գործընթացը համապատասխանի սույն Հրահանգի նպատակներին. քանի որ թափոնների տեսակավորումն ընդգրկված է թափոնների մշակում հասկացության մեջ,

9) քանի որ անդամ պետությունները պետք է կարողանան կիրառել թափոնները տվյալ վայրում տեղադրելու և այդ գործընթացի ինքնաձախսաձածակ լինելու սկզբունքները՝ Համայնքում և ազգային մակարդակով թափոնները հեռացնելու համար՝ «Թափոնների մասին» Խորհրդի 1975 թվականի հուլիսի 15-ի թիվ 75/442/ԵՏՀ Հրահանգին համապատասխան (s), և քանի որ սույն Հրահանգի

նպատակները պետք է կատարվեն և հստակեցվեն շրջակա միջավայրի բարձր մակարդակի պաշտպանություն ունեցող աղբի վերամշակման կայանների պատշաճ և ինտեգրված ցանց ստեղծելու միջոցով,

10) քանի որ թաղման միջոցով թափոնների հեռացման տեխնիկական ստանդարտների և դրա հետ կապված մանր ծախսերի միջև եղած տարբերությունները կարող են հանգեցնել թափոնների հեռացումը բնապահպանական ավելի ցածր ստանդարտներ ունեցող օբյեկտներում իրականացնելու մտքին, ինչն իր հերթին լուրջ սպառնալիք կներկայացնի շրջակա միջավայրի համար, ինչպես նաև կհանգեցնի թափոնների՝ երկար տարածություններով անհարկի տեղափոխման և հեռացման ոչ ճիշտ մեթոդներին,

11) քանի որ անհրաժեշտ է աղբավայրերի համար Համայնքի մակարդակով տեխնիկական ստանդարտներ սահմանել, որպեսզի հնարավոր լինի պաշտպանել, պահպանել և բարելավել Համայնքում շրջակա միջավայրի որակը:

12) քանի որ անհրաժեշտ է հստակորեն նշել այն պահանջները, որոնք թափոնների թաղման վայրերը պետք է բավարարեն այնքանով, որքանով դա վերաբերում է այդ վայրերի տեղանք ընտրելուն, պայմաններ ստեղծելուն, կառավարմանը, վերահսկմանը, փակմանը, կանխարգելիչ և պաշտպանական միջոցառումներին, որոնք կձեռնարկվեն շրջակա միջավայրի համար ցանկացած սպառնալիք վերացնելու նպատակով, ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարներով, և, հատկապես, դեպի հող ներթափանցող, թափոններից ծորացած կեղտաջրերի միջոցով՝ ստորգետնյա ջրերի աղտոտումը կանխելու համար,

13) քանի որ, հաշվի առնելով վերը ասվածը, անհրաժեշտ է հստակորեն սահմանել աղբավայրերի դասերը, ինչպես նաև այդ աղբավայրերի համար նախատեսված թափոնների տեսակները,

14) քանի որ թափոնների ժամանակավոր պահման վայրերը պետք է համապատասխանեն թիվ 75/442/ԵՏՀ հրահանգի համարժեք պահանջներին,

15) քանի որ, համաձայն թիվ 75/442/ԵՏՀ հրահանգի, ոչ ակտիվ և ոչ վտանգավոր թափոնների օգտահանումը, որոնք օգտագործվում են վերամշակված/վերականգնված ձևով և խամքարման գործերում կամ շինարարական նպատակներով, չի կարող աղբավայրի թափոնների տեղադրման գործընթաց համարվել,

16) քանի որ աղբավայրերում մեթանի արտադրության քանակը նվազեցնելու համար պետք է միջոցներ ձեռնարկվեն, որպեսզի կենսաբանորեն քայքայվող թափոնների թաղման ծավալների նվազեցման և աղբավայրերից արտանետված գազի

վերահսկումը ներկայացնող պահանջների միջոցով հնարավոր լինի նվազեցնել գլոբալ տաքացումը,

17) քանի որ կենսաբանորեն քայքայվող թափոնների թաղման ծավալները նվազեցնելու համար ձեռնարկվող միջոցները պետք է ուղղված լինեն նաև կենսաբանորեն քայքայվող թափոնների առանձին հավաքումը, ընդհանուր տեսակավորումը, օգտահանումը և վերամշակումը խթանելուն,

18) քանի որ, ելնելով թափոնների թաղման մեթոդի յուրահատուկ առանձնահատկություններից, անհրաժեշտ է թափոնների բոլոր դասերի՝ աղբավայրերի համար ներկայացնել թույլտվության հատուկ ընթացակարգ՝ համաձայն թիվ 75/442/ԵՏՀ հրահանգով արդեն իսկ սահմանված լիցենզավորման ընդհանուր պահանջների և «Աղտոտվածության կանխարգելման և վերահսկման համապարփակ մեխանիզմների մասին» թիվ 96/61/ԵՀ հրահանգում ամրագրված ընդհանուր պահանջների (6). քանի որ թափոնների թաղման վայրի համապատասխանությունն այդ թույլտվությանը պետք է ստուգվի իրավասու մարմնի կողմից իրականացվող վերահսկողության ժամանակ՝ նախքան թափոնների հեռացման աշխատանքներն սկսելը,

19) քանի որ յուրաքանչյուր դեպքում պետք է անցկացվեն ստուգումներ՝ պարզելու համար արդյոք հնարավոր է թափոնները տեղավորել դրանց համար նախատեսված աղբավայրերում. խոսքը հատկապես վերաբերում է վտանգավոր թափոններին,

20) քանի որ շրջակա միջավայրին սպառնացող վտանգը կանխելու համար անհրաժեշտ է ներկայացնել թափոնների ընդունման միասնական ընթացակարգ՝ հիմք ընդունելով թափոնների դասակարգման կարգը, որոնք ընդունվում են թափոնների տարբեր կատեգորիաների աղբավայրերում, մասնավորապես՝ ներառյալ ստանդարտացված սահմանային արժեքները հստակեցնելը. քանի որ այս նպատակով ժամանակին պետք է հաստատվի թափոնների առանձնահատկությունների որոշման, նմուշառման և վերլուծության համապատասխան ու ստանդարտացված համակարգ՝ խթանելու համար սույն Հրահանգի կիրարկումը. քանի որ չեզոք թափոնների դեպքում ընդունման չափորոշիչները պետք է հատուկ սահմանված լինեն,

21) քանի որ մինչև վերլուծության նման մեթոդների կամ առանձնահատկությունների որոշման համար անհրաժեշտ սահմանային արժեքների սահմանումը անդամ պետությունները սույն Հրահանգի նպատակներով պահպանում կամ կազմում են աղբավայրերում թաղելու համար թույլատրելի կամ ոչ ընդունելի թափոնների ազգային ցուցակներ կամ սահմանում են թափոնների ընդունման միասնական ընթացակարգի համար նախատեսված չափորոշիչներ՝ ներառյալ սահմանային արժեքները, որոնք նման են սույն Հրահանգով սահմանված չափորոշիչներին,

22) քանի որ որոշ վտանգավոր թափոնների և ոչ վտանգավոր թափոնների համար, որոնք պետք է ընդունվեն աղբավայրերում թաղելու նպատակով, տեխնիկական կոմիտեի կողմից պետք է մշակվեն թափոնների ընդունման չափորոշիչներ,

23) քանի որ անհրաժեշտ է աղբավայրերի գործառնական և վերականգնման փուլերում սահմանել մոնիտորինգի ընդհանուր ընթացակարգեր, որպեսզի հնարավոր լինի պարզել հնարավոր ցանկացած բացասական ազդեցություն, որ աղբավայրերը կարող են թողնել շրջակա միջավայրի վրա և ձեռնարկել համապատասխան ուղղիչ միջոցներ,

24) քանի որ անհրաժեշտ է սահմանել, թե երբ և ինչպես պետք է փակվի աղբավայրը, ինչպես նաև, թե որոնք են այդ վայրի օպերատորի պարտավորություններն ու պատասխանատվությունը այդ վայրերի վերականգնման ընթացքում,

25) քանի որ աղբավայրը, որոնք փակվել են մինչև սույն Հրահանգի փոխատեղումը, չեն ենթարկվում փակման ընթացակարգի դրույթներին,

26) քանի որ թափոնների արդեն իսկ առկա աղբավայրերի հետագա գործունեության պայմանները պետք է կարգավորվեն, որպեսզի գործողությունների համար նախատեսված վայրն անհրաժեշտ պայմանների բերելու պլանի հիման վրա հատուկ սահմանված ժամկետներում ձեռնարկվեն անհրաժեշտ միջոցառումներ՝ դրանք սույն Հրահանգին հարմարեցնելու համար,

27) քանի որ թափոնների արդեն իսկ առկա աղբավայրերի օպերատորները, որոնք համաձայն սույն Հրահանգի 14-րդ հոդվածում սահմանված նորմերին համարժեք ազգային պարտադիր նորմերի, արդեն ներկայացրել են սույն Հրահանգի 14 (ա) հոդվածում նշված փաստաթղթերը՝ մինչև սույն Հրահանգն ուժի մեջ մտնելը և որոնց իրավասու մարմինը թույլ է տվել շարունակել իրենց գործունեությունը, կարիք չունեն այս փաստաթղթերը վերաներկայացնելու, ինչպես նաև հարկ չկա, որ իրավասու մարմինը նոր թույլտվություն տա,

28) քանի որ շահագործողը պետք է ֆինանսական ապահովության կամ համարժեք այլ միջոցի օգնությամբ սահմանի համապատասխան դրույթներ, որպեսզի ապահովի, որ թույլտվություն ստանալու պահից ի վեր ստանձնած բոլոր պարտավորությունները կատարված են՝ ներառյալ տվյալ վայրի փակման ընթացակարգին և վերականգնման փուլին վերաբերող պարտավորությունները,

29) քանի որ պետք է ձեռնարկվեն միջոցառումներ, ապահովելու համար, որ աղբավայրերում թափոնների տեղավորման համար գանձվող գումարը ծածկում է կայանների ստեղծման և շահագործման բոլոր ծախսերը՝ ներառյալ ֆինանսական ապահովությունը կամ դրան համարժեք միջոցները, որոնք պետք է տրամադրի աղբավայրերի շահագործողը, ինչպես նաև կայանի փակման համար հաշվարկված ծախսերը՝ ներառյալ դրան հաջորդող անհրաժեշտ

վերականգնումը,

30) քանի որ, եթե իրավասու մարմինը համարում է, որ աղբավայրը դժվար թե վտանգ ներկայացնի շրջակա միջավայրի համար ավելի երկար ժամանակում, քան նախատեսված է, ապա հաշվարկված ծախսերը, որոնք ընդգրկվելու են աղբավայրի շահագործողից գանձվող գումարի մեջ, կարող են սահմանափակվել այդ ժամանակահատվածում,

31) քանի որ անհրաժեշտ է ապահովել Համայնքի տարածքում սույն Հրահանգի իրականացման համար անհրաժեշտ դրույթների պատշաճ կազմումը և ապահովել, որ աղբավայրերը շահագործողների և աշխատողների պատրաստվածությունն ու գիտելիքները բավարար են՝ անհրաժեշտ փորձ ունենալու համար,

32) քանի որ Հանձնաժողովը պետք է սահմանի ստանդարտ ընթացակարգեր՝ թափոնների ընդունման համար և ստանդարտ դասակարգում՝ աղբավայրերում ընդունվող թափոնների համար՝ համաձայն թիվ 75/442/ԵՏՀ հրահանգի 18-րդ հոդվածում նշված կոմիտեի ընթացակարգի,

33) քանի որ սույն Հրահանգի գիտական և տեխնիկական զարգացման նպատակով հավելվածների ընդունումը, մոնիտորինգի, նմուշառման և վերլուծության մեթոդների ստանդարտացումը պետք է իրականացվի կոմիտեի միևնույն ընթացակարգի համաձայն,

34) քանի որ անդամ պետությունները պետք է սույն Հրահանգի կատարման վերաբերյալ պարբերաբար հաշվետվություն ներկայացնեն Հանձնաժողով՝ հատկապես ուշադրություն դարձնելով 5-րդ հոդվածի իրականացման վրա հիմնված ազգային ռազմավարություններին, քանի որ այս հաշվետվությունների հիման վրա Հանձնաժողովը հաշվետվությունը կներկայացնի Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

### *Հոդված 1*

#### **Ընդհանուր նպատակը**

1. 75/442/ԵՏՀ հրահանգի պահանջները՝ մասնավորապես դրա 3-րդ և 4-րդ հոդվածները բավարարելու համար սույն Հրահանգի նպատակը թափոնների և աղբավայրերի աշխատանքային և տեխնիկական խիստ պահանջների միջոցով միջոցառումներ, ընթացակարգեր և ուղեցույց տրամադրելն է, որպեսզի հնարավոր

լինի առավելագույնս կանխել կամ նվազեցնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը՝ մասնավորապես մակերեսային ջրերի, ստորգետնյա ջրերի, հողի, օդի և գլոբալ շրջակա միջավայրի աղտոտումը՝ ներառյալ ջերմոցային էֆեկտը, ինչպես նաև մարդու առողջությանը սպառնացող ցանկացած ռիսկ, որը թափոնների թաղման ողջ կենսափուլի ընթացքում գոյություն ունեցող խնդիր է:

2. Սույն Հրահանգը պարունակում է տեխնիկական բնութագրեր՝ կապված թափոնների թաղման այն աղբավայրերի հետ, որոնց նկատմամբ կիրառվում է թիվ 96/61/ԵՀ հրահանգը, համապատասխան տեխնիկական պահանջներ, որպեսզի հնարավոր լինի մշակել տվյալ հրահանգի ընդհանուր պահանջները որոշակի պայմանների համար: Թիվ 96/61/ԵՀ հրահանգով սահմանված պահանջները համարվում են կատարված, եթե բավարարված են սույն Հրահանգի պահանջները:

## *Հոդված 2*

### **Սահմանումները**

Սույն Հրահանգի նպատակներով՝

- ա) «թափոն» նշանակում է ցանկացած նյութ կամ իր, որը կարգավորվում է 75/442/ԵՏՀ հրահանգով.
- բ) «կենցաղային թափոն» նշանակում է տնային տնտեսությունից ստացված թափոն կամ այլ թափոն, որն իր բնույթով կամ բաղադրությամբ նման է տնային տնտեսությունից ստացված թափոններին.
- գ) «վտանգավոր թափոն» նշանակում է ցանկացած թափոն, որը կարգավորվում է «վտանգավոր թափոնների մասին» Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 12-ի 91/689/ԵՏՀ հրահանգի 1(4) հոդվածով (7).
- դ) «ոչ վտանգավոր թափոն» նշանակում է թափոն, որը չի կարգավորվում գ) պարբերությամբ.
- ե) «ոչ ակտիվ թափոն» նշանակում է թափոն, որը չի ենթարկվում ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական որևէ էական ձևափոխության: Ոչ ակտիվ թափոնները չեն քայքայվում, այրվում կամ այլ նյութի հետ շփման մեջ մտնելիս ֆիզիկական կամ քիմիական ռեակցիայի մեջ չեն մտնում, կենսաբանորեն չեն քայքայվում կամ այլ եղանակով շրջակա միջավայրի կամ մարդու առողջության վրա բացասաբար չեն ազդում: Թափոնների ընդհանուր ակալահանման ունակությունը և դրանցում առկա աղտոտող նյութերի բաղադրությունը և թափոններից ծորացած կեղտաջրերի էկոլոգիապես թունավոր լինելը պետք է աննշան լինեն և, մասնավորապես, չպետք է վնասեն մակերեսային և (կամ) ստորգետնյա ջրերի որակին,
- զ) «ստորգետնյա պահեստ-կայան» նշանակում է թափոնները երկրաբանական խորը գոգավորություններում մշտապես պահելու համար նախատեսված պահեստ, ինչպես օրինակ՝ աղի կամ կալիումի հանքը.
- է) «աղբավայր» նշանակում է այնպիսի վայր, որը նախատեսված է թափոնները հողի վրա կամ մեջ պահելու համար (օրինակ՝ ստորգետնյա պահեստ-կայան) ներառյալ՝

- թափոնների ժամանակավոր տեղադրման վայրերը (օրինակ՝ աղբավայրեր, որտեղ թափոններ արտադրողն իր արտադրամասի տարածքում իրականացնում է իր իսկ առաջացրած թափոնների հեռացումը),
- թափոնների մշտական տեղադրման վայրերը (այսինքն՝ ավելի, քան մեկ տարով), որոնք օգտագործվում են թափոնների ժամանակավոր պահման համար,

#### սակայն բացառելով

- միջոցները, երբ թափոնները բեռնաթափվում են՝ հնարավոր դարձնելու համար դրանց նախապատրաստումն այլ վայր հետագա փոխադրման համար՝ օգտահանման, մշակման կամ հեռացման նպատակով,
  - նախքան օգտահանման կամ մշակման փուլը՝ թափոնների պահեստավորումն ավելի պակաս, քան որպես կանոն դարձած երեք տարի ժամկետով կամ
  - նախքան թափոնների տեղադրումը՝ դրանց պահեստավորումն ավելի քիչ, քան մեկ տարով,
- ը) «վնասագերծում» նշանակում է ֆիզիկական, ջերմային, քիմիական կամ կենսաբանական գործընթացներ՝ ներառյալ թափոնների տեսակավորումը, որոնք փոփոխում են թափոնների հատկությունները, որպեսզի հնարավոր լինի նվազեցնել դրանց ծավալը կամ վտանգավոր հատկությունները, հեշտացնել թափոնների հետ աշխատանքը կամ մեծացնել դրանց օգտահանումը.
- թ) «Թափոններից ծորացած կեղտաջուր» նշանակում է ցանկացած հեղուկ, որն առաջանում է թաղված թափոններից և ներթափանցում է աղբավայր կամ դուրս է գալիս դրա տարածքից.
- ժ) «աղբավայրերից արտանետված գազ» նշանակում է ցանկացած գազ, որն արտանետվում է աղբավայրերում.
- ժա) «էյուատ» նշանակում է լուծույթ, որն ստացվում է լաբորատորիայում՝ թափոններից ծորացած կեղտաջրերի ստուգման արդյունքում.
- ժբ) «օպերատոր» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը պատասխանատու է աղբավայրերի համար՝ համաձայն այն անդամ պետության ներքին օրենսդրության, որտեղ տեղակայված է աղբավայրը. այս անձը կարող է փոփոխություններ կատարել՝ նախապատրաստական փուլից մինչև վերականգնման փուլը.
- ժգ) «կենսաբանորեն քայքայվող թափոն» նշանակում է ցանկացած թափոն, որը կարող է ենթարկվել անաէրոբ և աէրոբ միկրոկենսաբանական տարրալուծման, ինչպես օրինակ՝ սննդից, պարտեզից առաջացած թափոններ, թուղթ և սովաբաթուղթ.
- ժդ) «սեփականատեր» նշանակում է թափոններ արտադրող կամ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը տնօրինում է թափոնները.
- ժե) «դիմող» նշանակում է ցանկացած անձ, որը, սույն Հրահանգի համաձայն, դիմում է աղբավայրերի թույլտվություն ստանալու համար.



ժգ) «իրավասու մարմին» նշանակում է այնպիսի մարմին, որին անդամ պետությունը լիազորել է որպես սույն Հրահանգից բխող պարտականությունների կատարման համար պատասխանատու.

ժէ) «հեղուկ թափոն» նշանակում է հեղուկ վիճակում գտնվող ցանկացած թափոն՝ ներառյալ կեղտաջրերը՝ բացառությամբ նստվածքի.

ժը) «մեկուսացված բնակավայր» նշանակում է բնակավայր՝

- ոչ ավելի, քան 500 բնակիչներով յուրաքանչյուր քաղաքում կամ բնակավայրում և ոչ ավելի, քան յուրաքանչյուր կիլոմետր քառակուսում հինգ բնակիչ խտությամբ,
- որից մինչև ամենամոտ քաղաքային ագլոմերացիան, որը քառ. կմ–ի վրա ունի առնվազն 250 բնակիչ, հեռավորությունն առնվազն 50կմ է, կամ որից նշված ամենամոտ ագլոմերացիաները տարվա մեծ մասի ընթացքում ճանապարհով հասնելը բարդ է՝ օդերևութաբանական վատ պայմանների պատճառով:

### *Հոդված 3*

#### **Գործողության ոլորտը**

1. Անդամ պետությունները սույն Հրահանգը կիրառում են 2(է) հոդվածում նշված ցանկացած աղբավայրի նկատմամբ:
2. Չհակասելով Համայնքի գործող օրենսդրությանը՝ սույն Հրահանգի գործողության ոլորտից պետք է բացառվեն հետևյալները՝
  - նստվածքների տարածումը՝ ներառյալ կեղտաջրերի նստվածքները, հողահանման և հողի պարարտացման կամ բարելավման նպատակով այլ գործողությունների հետևանքով առաջացած,
  - չեզոք թափոնների վերամշակված/վերականգնված ձևով օգտագործումը՝ աղբավայրերում խամքարման գործերում կամ շինարարական նպատակներով,
  - փոքր ջրուղիներից հանված հողահանման ոչ վտանգավոր նստվածքների և ջրի մակերևույթից հանված ոչ վտանգավոր նստվածքների տեղավորումը այդ ջրային ուղիների մոտակայքում՝ ներառյալ հատակային նստվածքները և հողի ստորին շերտը,
  - հանքային ռեսուրսների հանքահետախուզության, արդյունահանության, մշակման և պահեստավորման, ինչպես նաև քարհանքերի գործունեության արդյունքում ստացված՝ չաղտոտված հողի կամ ոչ վտանգավոր չեզոք թափոնների տեղավորումը:
3. Չհակասելով 75/442/ԵՏՀ հրահանգին՝ անդամ պետությունները կարող են իրենց սեփական հայեցողությամբ հայտարարել, որ ոչ վտանգավոր թափոնների տեղավորումը, որը որոշվում է սույն Հրահանգի 17-րդ հոդվածով նախատեսված կոմիտեի կողմից, տարբերվում է չեզոք թափոնների տեղավորումից, որոնք առաջացել են հանքային ռեսուրսների հանքահետախուզության, արդյունահանության, մշակման և պահեստավորման, ինչպես նաև քարհանքերի գործունեության արդյունքում և որոնք հեռացվում են՝ կանխելով շրջակա միջավայրի

աղտոտումն ու մարդու առողջությանը սպառնացող վտանգը, կարող են չենթարկվել սույն Հրահանգի I հավելվածի 2-րդ, 3.1, 3.2 և 3.3 կետերին:

4. Չհակասելով 75/442/ԵՏՀ հրահանգին՝ անդամ պետությունները կարող են իրենց հայեցողությամբ մասամբ կամ ամբողջովին հրապարակել սույն Հրահանգի 6(դ), 7(թ), 8(ա)(iv), 10, 11(1)(ա), (բ) և (գ), 12(ա) և (գ) հոդվածները, I հավելվածը, 3-րդ և 4-րդ կետերը, II հավելվածը (բացի 3-րդ կետից, 3-րդ աստիճանից և 4-րդ կետից) և III հավելվածի 3-5-րդ կետերը, որոնք չեն կիրառվում հետևյալի նկատմամբ՝

ա) աղբավայրեր, որոնք ծառայում են կղզիներին և որոնք նախատեսված են ոչ վտանգավոր կամ չեզոք թափոնների համար, որոնց ընդհանուր ծավալը չի գերազանցում 15 000 տոննան կամ տարեկան ընդհանուր քանակությունը չի գերազանցում 1 000 տոննան, երբ այդ վայրը կղզու թափոնների միակ աղբավայրն է և բացառապես օգտագործվում է այդ կղզու վրա արտադրված թափոնների հեռացման համար: Հենց որ այդ աղբավայրի ողջ տարողունակությունն օգտագործվի, կղզու վրա ստեղծվող ցանկացած նոր աղբավայր պետք է համապատասխանի սույն Հրահանգի պահանջներին:

բ) մեկուսացված բնակավայրերում աղբավայրեր, որոնք նախատեսված են ոչ վտանգավոր կամ չեզոք թափոնների համար, եթե թափոնների թաղման վայրը նախատեսված է այն թափոնների տեղավորման համար, որոնք միայն տվյալ մեկուսացված բնակավայրն է արտադրել:

Ոչ ուշ, քան 18(1) հոդվածում նշված ժամկետից երկու տարի հետո անդամ պետությունները Հանձնաժողովին տեղեկացնում են ազատված կղզիների և մեկուսացված բնակավայրերի ցանկի մասին: Հանձնաժողովը հրապարակում է կղզիների և մեկուսացված բնակավայրերի ցանկը:

5. Չհակասելով 75/442/ԵՏՀ հրահանգին՝ անդամ պետությունները կարող են իրենց հայեցողությամբ հայտարարել, որ սույն Հրահանգի 2(գ) հոդվածում նշված ստորգետնյա պահեստ-կայանները կարող են ազատվել սույն Հրահանգի 13(դ) հոդվածում, I հավելվածում, 2-րդ կետում՝ բացառությամբ առաջին տողի, 3-ց 5-րդ կետերում, III հավելվածում, 2-րդ, 3-րդ և 5-րդ կետերում նշված դրույթներից:

#### *Հոդված 4*

### **Աղբավայրերի դասակարգումները**

- Յուրաքանչյուր աղբավայր պատկանում է հետևյալ դասակարգումներից որևէ մեկին՝
- վտանգավոր թափոնների տեղադրման համար աղբավայրեր,
  - ոչ վտանգավոր թափոնների տեղադրման համար աղբավայրեր,
  - ոչ ակտիվ թափոնների տեղադրման համար աղբավայրեր:

#### *Հոդված 5*

### **Աղբավայրերում չընդունվող թափոնները և դրանց մշակումը**

1. Անդամ պետությունները թափոնների գերեզմանոցներ փոխադրվող կենսաբանորեն քայքայվող թափոնների քանակության նվազեցումն իրականացնելու

համար պետք է 18(1) հոդվածում նշված ժամկետից հետո ոչ ուշ, քան երկու տարի հետո ազգային ռազմավարություն կազմեն և Հանձնաժողովին տեղեկացնեն այդ ռազմավարության մասին: Այս ռազմավարությունը պետք է ընդգրկի այնպիսի միջոցներ, որոնք կօգնեն իրականացնելու 2-րդ պարբերության մեջ նշված նպատակները՝ մասնավորապես վերամշակման, կոմպոստացման, բիոգազի արտադրության կամ նյութերի/էներգիայի օգտահանման միջոցով: 18 (1) հոդվածում նշված ժամկետից սկսած 30 ամիսների ընթացքում Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտին և Խորհրդին պետք է հաշվետվություն տրամադրի՝ ազգային ռազմավարությունների նմանեցման մասին:

2. Այս ռազմավարությունը պետք է ապահովի, որ

- ա) 18(1) հոդվածում նշված ժամկետից ոչ ուշ, քան հինգ տարի հետո աղբավայրեր փոխադրվող կենսաբանորեն քայքայվող կենցաղային թափոնների քանակը պետք է նվազեցվի մինչև 75%՝ համեմատած կենսաբանորեն քայքայվող կենցաղային թափոնների ընդհանուր այն քանակության (կշռի) հետ, որն արտադրվել է 1995 թվականին կամ դրանից առաջ ամենավերջին տարում, որի ընթացքում հասանելի դարձան Եվրաստատի ստանդարտացված տվյալները:
- բ) 18 (1) հոդվածում նշված ժամկետից ոչ ուշ, քան ութ տարի հետո աղբավայրեր փոխադրվող կենսաբանորեն քայքայվող կենցաղային թափոնների քանակը պետք է նվազեցվի մինչև 50 %՝ համեմատած կենսաբանորեն քայքայվող կենցաղային թափոնների ընդհանուր այն քանակության (կշռի) հետ, որն արտադրվել է 1995 թվականին կամ դրանից առաջ ամենավերջին տարում, որի ընթացքում հասանելի դարձան Եվրաստատի ստանդարտացված տվյալները:
- գ) 18 (1) հոդվածում նշված ժամկետից ոչ ուշ, քան տասնհինգ տարի հետո աղբավայրեր փոխադրվող կենսաբանորեն քայքայվող կենցաղային թափոնների քանակը պետք է նվազեցվի մինչև 35 %՝ համեմատած կենսաբանորեն քայքայվող կենցաղային թափոնների ընդհանուր այն քանակության (կշռի) հետ, որն արտադրվել է 1995 թվականին կամ դրանից առաջ ամենավերջին տարում, որի ընթացքում հասանելի դարձան Եվրաստատի ստանդարտացված տվյալները:

Շրջակա միջավայրի բարձր մակարդակի պաշտպանությունն ապահովելու համար, Խորհուրդը, (գ) պարբերության մեջ նշված ժամկետից երկու տարի առաջ, վերանայում է վերը նշված նպատակը՝ հիմք ընդունելով (ա) և (բ) պարբերություններով սահմանված նպատակներն իրագործելու համար անդամ պետությունների կողմից ձեռք բերված գործնական փորձի մասին Հանձնաժողովի կողմից ներկայացվող զեկույցը, որին կից, անհրաժեշտության դեպքում ներկայացնում է առաջարկություն՝ նշված նպատակը հաստատելու կամ այն փոփոխելու համար:

Անդամ պետությունները, որոնք 1995 թվականին կամ դրանից առաջ ամենավերջին տարում, որի ընթացքում հասանելի դարձան Եվրաստատի ստանդարտացված տվյալները, աղբավայր են հանձնել իրենց կուտակված թափոնների ավելի քան 80%-ը, կարող են հետաձգել (ա), (բ) և (գ) պարբերություններում նշված նպատակների իրականացումը չորս տարին չգերազանցող ժամկետով: Այն անդամ պետությունները, որոնք այս դրույթները կիրառելու մտադրություն ունեն, պետք է նախապես իրենց որոշման մասին տեղյակ պահեն Հանձնաժողովին: Հանձնաժողովն այս որոշումների

մասին տեղեկացնում է մյուս անդամ պետություններին և Եվրոպական պառլամենտին:

Նախորդ ենթապարբերության մեջ նշված դրույթների իրականացումը ոչ մի պարագայում չի կարող հանգեցնել (գ) պարբերության մեջ նշված նպատակի՝ ավելի ուշ ժամկետում իրականացմանը, քան (գ) պարբերության մեջ նշված ժամկետից չորս տարի հետո:

3. Անդամ պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու համար, որ աղբավայրերը չընդունեն հետևյալ թափոնները՝

- ա) հեղուկ թափոններ,
  - բ) թափոններ, որոնք աղբավայրերի պայմաններում պայթուցիկ են, քայքայվող, օքսիդացվող, խիստ դյուրավառ կամ դյուրավառ՝ ինչպես նշված է 91/689/ԵՏՀ հրահանգի III հավելվածում,
  - գ) հիվանդանոցային և այլ կլինիկական թափոններ, որոնք գոյանում են բժշկական կամ անասնաբուժական հաստատություններում, որոնք համարվում են վարակիչներ՝ ինչպես նշված է (III հավելվածում H9), 91/689/ԵՏՀ հրահանգում և թափոններ, որոնք ընդգրկված են նույն հրահանգի 14-րդ կատեգորիայի ներքո (I Ա հավելված):
  - դ) 18 (1) հոդվածում նշված ժամկետից սկսած երկու տարի ամբողջությամբ օգտագործված անվադողեր՝ բացառությամբ որպես տեխնիկական նյութ օգտագործվող անվադողերը և 18(1) հոդվածում նշված ժամկետից սկսած հինգ տարի օգտագործված պատառոտված անվադողեր, (երկու դեպքում էլ բացառելով հեծանվի անվադողերը և 1 400 մմ արտաքին տրամագիծ ունեցող անվադողերը),
  - ե) ցանկացած այլ տեսակի թափոն, որը չի բավարարում II հավելվածի համաձայն սահմանված թափոնների ընդունման չափանիշները:
4. Արգելվում է զուտ թափոնների ընդունման չափորոշիչները բավարարելու նպատակով թափոնների խառնուրդների նոսրացումը:

### *Հոդված 6*

#### **Թափոններ, որոնք ընդունվում են թափոնների տարբեր տեսակի աղբավայրերում**

Անդամ պետությունները միջոցներ են ձեռնարկում, որպեսզի

- ա) թաղվեն միայն այն թափոնները, որոնք ենթարկվել են մշակման: Այս դրույթը չի կարող կիրառվել չեզոք թափոնների համար, որոնց համար մշակման գործընթացը տեխնիկապես իրագործելի չէ, ինչպես նաև իրագործելի չէ այն թափոնների համար, որոնց համար մաքրումը չի խթանում սույն Հրահանգի նպատակների իրականացմանը, որոնք նշված են 1-ին հոդվածում և որոնք ուղղված են թափոնների քանակի կամ մարդու առողջությանը, կամ շրջակա միջավայրին սպառնացող վտանգների կրճատմանը:
- բ) վտանգավոր թափոնների համար նախատեսված աղբավայրեր հանձնվեն միայն այն վտանգավոր թափոնները, որոնք բավարարում են II հավելվածի համաձայն կազմված չափորոշիչները,
- գ) ոչ վտանգավոր թափոնների համար նախատեսված աղբավայրը կարող է օգտագործվել՝

- i) կենցաղային թափոնների համար,
  - ii) ցանկացած այլ ծագման ոչ վտանգավոր թափոնների համար, որոնք բավարարում են ոչ վտանգավոր թափոնների համար նախատեսված աղբավայրերում թափոնների ընդունման չափորոշիչները, որոնք կազմված են՝ համաձայն II հավելվածի,
  - iii) կայուն, ոչ ռեակտիվ վտանգավոր թափոնների համար (օրինակ՝ կարծրացված, ապակեպատված), որոնց գտվածքը համարժեք է (ii) կետում նշված ոչ վտանգավոր թափոնների գտվածքին, որոնք բավարարում են թափոնների ընդունման՝ II հավելվածի համաձայն կազմված չափորոշիչները: Վտանգավոր այս թափոնները չպետք է տեղավորել կենսաբանորեն քայքայվող, ոչ վտանգավոր թափոնների համար նախատեսված գերեզմանոցում,
- դ) չեզոք թափոնների թաղման վայրերը պետք է ծառայեն միայն չեզոք թափոններին:

### *Հոդված 7*

#### **Թույլտվություն ստանալու համար դիմում**

Անդամ պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում, որպեսզի ապահովեն, որ աղբավայրերի համար թույլտվություն ստանալու դիմումը պարունակի առնվազն հետևյալ տեղեկությունները՝

- ա) դիմողի և շահագործողի ինքնության, եթե նրանք տարբեր անձինք են,
- բ) պահելու համար նախատեսված թափոնների տեսակների և ընդհանուր քանակի նկարագրությունը,
- գ) թափոնների հեռացման վայրի համար առաջարկված տարողունակության,
- դ) այդ վայրի նկարագրությունը՝ ներառյալ դրա հիդրոերկրաբանական և երկրաբանական առանձնահատկությունները,
- ե) աղտոտման կանխարգելման և նվազեցման համար առաջարկված մեթոդները,
- զ) շահագործման, մոնիտորինգի և վերահսկման համար առաջարկված պլանը,
- է) փակման և դրան հաջորդող վերականգնման ընթացակարգերի համար առաջարկված պլանը,
- ը) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ պլանը կազմողի կողմից տրամադրված տեղեկություններ, եթե ազդեցության գնահատման պահանջը սահմանված է «Շրջակա միջավայրի վրա հանրային և մասնավոր որոշակի ծրագրերի ազդեցության գնահատման մասին» Խորհրդի 1985 թվականի հունիսի 27–ի 85/337/ԵՏՀ հրահանգով (8)՝ համաձայն այդ հրահանգի 5–րդ հոդվածի,
- թ) դիմողի կողմից ներկայացվող ֆինանսական անվտանգության երաշխիք կամ այլ համարժեք դրույթ, ինչպես սահմանված է սույն Հրահանգի 8(ա)(iv) հոդվածով:

Թույլտվության դիմումը բավարարելուց հետո այս տեղեկատվությունը մատչելի է դարձվում իրավասու ազգային մարմիններին և Համայնքի վիճակագրական մարմիններին, եթե այդ տեղեկատվությունը վիճակագրական նպատակներով անհրաժեշտ է:

## Հոդված 8

### Թույլտվության պայմանները

Անդամ պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում, որպեսզի

- ա) իրավասու մարմինը թույլ չտա թաղել թափոնները, եթե դրանք չեն բավարարում հետևյալը՝
- i) չհակասելով 3 (4) և (5) հոդվածներին՝ թափոնների թաղման ծրագիրը բավարարում է սույն Հրահանգի բոլոր պահանջները՝ ներառյալ հավելվածները,
  - ii) աղբավայրի կառավարումն իրականացնում է ֆիզիկական այն անձը, ով տեխնիկապես կարող է իրականացնել այդ վայրի կառավարումը. ապահովվում է աղբավայրերի շահագործողների և աշխատողների մասնագիտորեն և տեխնիկապես զարգացումն ու վերապատրաստումը,
  - iii) թափոնների թաղման գործընթացն իրականացվում է այնպես, որ ձեռնարկվեն անհրաժեշտ բոլոր միջոցառումները՝ կանխելու համար դժբախտ պատահարներն ու սահմանափակելու համար դրանց հետևանքները,
  - iv) նախքան թափոնների հեռացման գործընթացը դիմողը, անդամ պետությունների կողմից որոշվող պահանջների հիման վրա, ֆինանսական անվտանգության կամ համարժեք այլ միջոցով կազմում է կամ կկազմի համապատասխան դրույթներ, որպեսզի կարողանա ապացուցել, որ սույն Հրահանգի դրույթների ներքո իրեն տրված թույլտվության արդյունքում ստանձնած իր պարտավորությունները (ներառյալ հաջորդող վերականգնման փուլը) կատարվում են և որ պահպանվում են 13-րդ հոդվածով սահմանված փակման ընթացակարգերը: Ֆինանսական այս անվտանգությունը կամ դրան համարժեք այլ միջոց պետք է պահպանվեն այնքան ժամանակ, քանի դեռ պահանջում է թափոնների թաղման վայրի սպասարկումն ու շահագործումը՝ համաձայն 13(դ) հոդվածի: Անդամ պետությունները կարող են իրենց հայեցողությամբ հայտարարել, որ այս կետը չի տարածվում չեզոք թափոնների համար նախատեսված աղբավայրերի վրա:
- բ) աղբավայրի ծրագիրը համապատասխանում է 75/442/ԵՏՀ հրահանգի 7-րդ հոդվածում նշված թափոնների կառավարման պլանին կամ պլաններին,
- գ) նախքան թափոնների տեղավորման գործընթացը՝ իրավասու մարմիններն ստուգում են տեղավորման համար նախատեսված վայրը, որպեսզի ապահովեն, որ այն համապատասխանում է թույլտվության համապատասխան պայմանների հետ: Սա ոչ մի ձևով չի նվազեցնում շահագործողի՝ թույլտվության պայմաններից բխող պատասխանատվությունը:

## Հոդված 9

### Թույլտվության բովանդակությունը

Հստակեցնելով և լրացնելով 75/442/ԵՏՀ հրահանգի 9-րդ հոդվածով և 96/61/ԵՀ հրահանգի 9-րդ հոդվածով սահմանված դրույթները՝ աղբավայրերի համար թույլտվությունը պետք է ներառի առնվազն հետևյալը

- ա) աղբավայրերի տեսակը,
- բ) աղբավայրերում տեղավորման ենթակա թափոնների որոշված տեսակների և ընդհանուր քանակի ցանկը,
- գ) աղբավայրերի շահագործման նախապատրաստման, մոնիտորինգի և ստուգումների՝ ներառյալ անկանխատեսելի իրավիճակների (Հավելված III, կետ 4.Բ) պահանջները, ինչպես նաև փակման և դրան հաջորդող վերականգնման գործողությունների ժամանակավոր պահանջները,
- դ) թափոնների գերեզմանոցներում պահվող թափոնների տեսակների ու քանակության և, ինչպես պահանջվում է III հավելվածի 12-րդ և 13-րդ հոդվածներով, մոնիտորինգի ծրագրի արդյունքների մասին տեղեկություններն առնվազն ամեն տարի իրավասու մարմնին հայտնելու մասով դիմողի պարտավորությունը:

### *Հոդված 10*

#### **Թափոնների թաղման հետ կապված ծախսերը**

Անդամ պետությունները միջոցառումներ են ձեռնարկում՝ ապահովելու, որ թափոնների թաղման վայրի ստեղծման և շահագործման գործընթացների բոլոր ծախսերը, որոնք հնարավորինս ընդգրկում են 8(ա)(iv) հոդվածում նշված ֆինանսական ապահովության կամ դրան համարժեք միջոցների ծախսերը, ինչպես նաև թափոնների թաղման վայրի փակման և դրան հաջորդող վերականգնման ընթացակարգերի համար հաշվարկված ծախսերն առնվազն 30 տարի ժամկետում պետք է ծածկվեն շահագործողից ստացված գումարով, որը գանձվել է վերջինից՝ այդ վայրում ցանկացած տեսակի թափոն տեղավորելու համար: «Բնապահպանության մասին տեղեկատվության մատչելիության ազատության մասին» Խորհրդի 1990 թվականի հունիսի 7-ի 90/313/ԵՏՀ հրահանգի պահպանությամբ (9)՝ անդամ պետություններն ապահովում են ծախսերի մասին անհրաժեշտ ցանկացած տեղեկատվության օգտագործման և կուտակման թափանցիկությունը:

### *Հոդված 11*

#### **Թափոնների ընդունման ընթացակարգերը**

1. Անդամ պետությունները միջոցներ են ձեռնարկում՝ ապահովելու, որ նախքան աղբավայր հանձնվող թափոնների ընդունումը կատարվեն ներքոհիշյալ գործողությունները՝
- ա) մինչև առաքումը կամ դրա ընթացքում կամ մինչև մի շարք առաքումներից առաջինը կամ դրա ընթացքում թափոնի տեսակը մնա անփոփոխ, որ սեփականատերը կամ շահագործողը համապատասխան փաստաթղթերի՝ միջոցով ցույց տա, որ խնդրո առարկա թափոնը կարող է ընդունվել տվյալ վայր՝ համաձայն թույլտվության մեջ նշված պայմանների և որ այն բավարարում է թափոնների ընդունման չափորոշիչները, որոնք նշված են II հավելվածում,
  - բ) շահառուն պահպանում է ընդունման հետևյալ ընթացակարգերը՝

— թափոնների վերաբերյալ փաստաթղթերի ստուգում՝ ներառյալ այն փաստաթղթերը, որոնք պահանջվում են 91/689/ԵՏՀ հրահանգի 5(3) հոդվածով և, անհրաժեշտության դեպքում, այն փաստաթղթերը, որոնք պահանջվում են «Եվրոպական համայնքի տարածքում, տարածքից դուրս և դեպի տարածք թափոնների փոխադրման ստուգումների և վերահսկողության մասին» Խորհրդի 1993 թվականի փետրվարի 1-ի թիվ 259/93 (ԵՏՀ) կանոնակարգով (10),

— թափոնների տեսողական ստուգում մուտքի մոտ և թաղման վայրում և, որպես հետևանք, պարունակության համեմատություն սեփականատիրոջ կողմից տրամադրված փաստաթղթերում նշված նկարագրության հետ: Եթե ներկայացված նմուշները պետք է ընդունվեն II հավելված, 3-րդ կետ, 3-րդ աստիճանով սահմանված կարգով, վերլուծության արդյունքները պետք է պահվեն, իսկ նմուշառումը պետք է կատարվի՝ համաձայն II հավելվածի 5-րդ կետի: Այս նմուշները պետք է պահվեն առնվազն մեկ ամիս:

— թաղված թափոնների քանակի և առանձնահատկությունների վերաբերյալ գրանցամատյանների վարում, որոնք այդ թափոնների ծագման, առաքման ամսաթվի մասին տեղեկություններ կպարունակեն, կենցաղային թափոնների դեպքում նաև տեղեկություններ՝ թափոններն արտադրողի կամ հավաքողի ինքնության մասին իսկ վտանգավոր թափոնների դեպքում՝ թաղված թափոնների գերեզմանոցի ճշգրիտ տեղը: Այս տեղեկատվությունը տրամադրվում է իրավասու ազգային մարմիններին և Համայնքի վիճակագրական մարմիններին, եթե այդ տեղեկատվությունը վիճակագրական նպատակներով անհրաժեշտ է :

գ) աղբավայրը շահագործողը պարտավոր է տվյալ վայրում ընդունված յուրաքանչյուր առաքման վերաբերյալ անընդհատ գրավոր հաստատում տրամադրել,

դ) չհակասելով թիվ 259/93 (ԵՏՀ) կանոնակարգի դրույթներին, եթե թափոնը չի ընդունվում աղբավայրի կողմից՝ շահագործողը, առանց հապաղելու, այդ մասին տեղյակ է պահում իրավասու մարմին:

2. Այն աղբավայրերի համար, որոնք, հիմնվելով 3 (4) և (5) հոդվածների վրա, ազատվել են սույն Հրահանգի դրույթները կատարելու պարտավորությունից, անդամ պետությունները միջոցներ են ձեռնարկում, որպեսզի ապահովեն՝

— թափոնների կանոնավոր տեսողական ստուգում թաղման համար նախատեսված տարածքում՝ ապահովելու համար, որ տվյալ վայրում ընդունվում են կղզուց կամ մեկուսացված բնակավայրից ստացված միայն ոչ վտանգավոր թափոնները,

— տվյալ վայրում թաղված թափոնների քանակի վերաբերյալ գրանցամատյանների վարում:

Անդամ պետություններն ապահովում են, որ նման ազատված վայրերում թաղված թափոնների քանակության, անհրաժեշտության դեպքում նաև տեսակի մասին տեղեկատվությունը կազմի հրահանգի իրականացման վերաբերյալ Հանձնաժողովին ուղղված կանոնավոր հաշվետվության մի մասը:



## Article 12

### **Հսկողության և մոնիտորինգի ընթացակարգերը գործառնական փուլում**

Անդամ պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում, որպեսզի ապահովեն, որ հսկողության և մոնիտորինգի ընթացակարգերը գործառնական փուլում բավարարեն առնվազն հետևյալ պահանջները՝

- (ա) գործառնական փուլում աղբավայր շահագործողը պետք է հսկողության և մոնիտորինգի ծրագիր իրականացնի՝ ինչպես նշված է III հավելվածում,
- (բ) շահագործողն իրավասու մարմնին տեղեկացնում է շրջակա միջավայրի վրա ցանկացած բացասական ազդեցության մասին, որն ի հայտ է եկել հսկողության և մոնիտորինգի ընթացակարգերն իրականացնելիս, և հետևում է ձեռնարկվող ուղղիչ միջոցառումների բնույթի և ժամկետների վերաբերյալ իրավասու մարմնի կայացրած որոշմանը: Այս միջոցառումները ձեռնարկվում են շահագործողի հաշվին:

Իրավասու մարմնի կողմից սահմանված հաճախականությամբ և ցանկացած առիթով տարվա մեջ առնվազն մեկ անգամ շահագործողը, ամփոփ տվյալների հիման վրա, իրավասու մարմնին զեկուցում է մոնիտորինգի բոլոր տվյալները՝ նպատակ ունենալով ցույց տալու թույլտվության պայմանների հետ համապատասխանությունը և ընդլայնելու համար աղբավայրերում թափոնների զարգացման մասին տեղեկությունները,

- գ) 11(1)(բ) հոդվածով սահմանված վերլուծությունների կամ հսկողության և մոնիտորինգի ընթացակարգերի վերլուծական գործառնությունների որակի հսկողությունն իրականացնում են իրավասու լաբորատորիաները:

## *Հոդված 13*

### **Փակման և դրան հաջորդող վերականգնման ընթացակարգերը**

Անդամ պետություններն անհրաժեշտ միջոցառումներ են ձեռնարկում, որպեսզի ապահովեն, որ թույլտվության համաձայն

- ա) աղբավայրը կամ դրա մի մասը սկսում է փակման ընթացակարգը,
  - i) երբ թույլտվության մեջ նշված համապատասխան պայմանները բավարարված են,
  - ii) շահագործողի խնդրանքով՝ իրավասու մարմնի թույլտվության ներքո,
  - iii) իրավասու մարմնի հիմնավորված որոշումով,
- բ) աղբավայրը կամ դրա մի մասը կարող է վերջնականապես փակված համարվել միայն այն բանից հետո, երբ իրավասու մարմինը տվյալ վայրի վերջնական ստուգում է անցկացրել, գնահատել է շահագործողի ներկայացրած բոլոր հաշվետվությունները և վերջինիս ներկայացրել է փակման վերաբերյալ իր հաստատումը: Սա ոչ մի ձևով չի նվազեցնում շահագործողի՝ թույլտվության պայմաններից բխող պատասխանատվությունը:

զ) աղբավայրի վերջնական փակումից հետո շահագործողը պատասխանատվություն է կրում վերականգնման փուլում դրա սպասարկման, մոնիտորինգի և հսկողության համար այնքան ժամանակ, որքան կպահանջի իրավասու մարմինը՝ հաշվի առնելով այն ժամանակը, որի ընթացքում գերեզմանոցը կարող է վտանգ ներկայացնել:

Շահագործողը իրավասու մարմնին պետք է տեղեկացնի շրջակա միջավայրի վրա ցանկացած բացասական ազդեցության մասին, որն ի հայտ է եկել հսկողության ընթացակարգն իրականացնելիս և հետևում է ձեռնարկվող ուղղիչ միջոցառումների բնույթի և ժամկետների վերաբերյալ իրավասու մարմնի կայացրած որոշմանը,

դ) այնքան ժամանակ, քանի դեռ իրավասու մարմինը համարում է, որ աղբավայրը վտանգ է ներկայացնում շրջակա միջավայրի համար և չհակասելով թափոնների սեփականատիրոջ պարտավորությունների վերաբերյալ Համայնքի կամ ազգային որևէ օրենսդրության՝ թափոնների թաղման վայրը շահագործողը պատասխանատվություն է կրում աղբավայրերից արտանետված գազի, այդ վայրում արտադրվող թափոններից ծորացած կեղտաջրերի և այդ վայրին հարող տարածքների ստորգետնյա ջրերի ռեժիմի համար՝ համաձայն III հավելվածի:

#### *Հոդված 14*

### **Առկա աղբավայրերը**

Անդամ պետությունները միջոցներ են ձեռնարկում՝ ապահովելու համար, որ թույլտվություն ստացած աղբավայրերը կամ սույն Հրահանգի փոխատեղման ընթացքում արդեն իսկ առկա աղբավայրերը չեն կարող շարունակել իրենց գործունեությունը, քանի դեռ հնարավորինս շուտ չեն իրականացվել ներքոհիշյալ քայլերը և 18 (1) հոդվածով սահմանված ժամկետից հետո ամենաուշը՝ ութ տարվա ընթացքում՝

ա) 18(1) հոդվածով սահմանված ժամկետից հետո մեկ տարվա ընթացքում աղբավայրը շահագործողը իրավասու մարմնին ներկայացնելու և վերջինիս համաձայնությունը ստանալու նպատակով տվյալ վայրն անհրաժեշտ պայմաններով ապահովելու պլան է մշակում՝ ներառյալ 8-րդ հոդվածում նշված մանրամասնությունները և ցանկացած ուղղիչ միջոցառում, որը, շահագործողի կարծիքով, կարող է անհրաժեշտ լինել սույն Հրահանգի պահանջներին համապատասխանելու համար՝ բացառությամբ I հավելվածի 1-ին կետում նշված պահանջների,

բ) թափոնների թաղման վայրն անհրաժեշտ պայմաններով ապահովելու պլանը՝ ներկայացնելուց հետո իրավասու մարմինը պետք է վերջնական որոշում կայացնի՝ արդյոք գործողությունները կարող են շարունակվել՝ հիմնվելով թափոնների թաղման վայրը անհրաժեշտ պայմաններով ապահովելու պլանի և սույն Հրահանգի վրա: Անդամ պետությունները, հնարավորինս շուտ և համաձայն 7(է) և 13-րդ հոդվածների, անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում՝ փակելու այն վայրերը, որոնք, համաձայն 8-րդ հոդվածի, գործունեությունը շարունակելու թույլտվություն չեն ստացել,

գ) թափոնների թաղման վայրն անհրաժեշտ պայմաններով ապահովելու պլանի հիման վրա իրավասու մարմինը պետք է թույլ տա անհրաժեշտ աշխատանքների

իրականացումը և անցումային ժամանակաշրջան սահմանի՝ այդ պլանն ավարտելու համար: Յուրաքանչյուր արդեն իսկ գոյություն ունեցող աղբավայր պետք է բավարարի սույն Հրահանգի պահանջները 18 (1) հոդվածով ամրագրված ժամկետից հետո ութ տարվա ընթացքում՝ քաղաքային I հավելվածի 1-ին կետով սահմանված պահանջների,

- դ) i) 18(1) հոդվածով սահմանված ժամկետից հետո մեկ տարվա ընթացքում վտանգավոր թափոնների համար նախատեսված աղբավայրերի նկատմամբ կիրառվում են 18(1) հոդվածը, 4-րդ, 5-րդ և 11-րդ հոդվածներն ու II հավելվածը,
- ii) 18(1) հոդվածով սահմանված ժամկետից հետո երեք տարվա ընթացքում վտանգավոր թափոնների համար նախատեսված աղբավայրերի նկատմամբ կիրառվում է 6-րդ հոդվածը:

### *Հոդված 15*

#### **Հաշվետվության պարտավորությունը**

Յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ անդամ պետությունները Հանձնաժողով են ուղարկում սույն Հրահանգի իրականացման մասին հաշվետվություն՝ հատկապես ուշադրություն դարձնելով 5-րդ հոդվածով ամրագրված ազգային ռազմավարություններին: Հանձնաժողովը պետք է հաշվետվությունը կազմի հարցաշարի կամ նախագծված նկարագրի հիման վրա՝ համաձայն շրջակա միջավայրին առնչվող որոշակի հրահանգների իրականացման մասին հաշվետվությունների ստանդարտացման և հիմնավորման վերաբերյալ 91/692/ԵՏՀ (11) հրահանգի 6-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի: Հարցաշարը կամ նկարագիրը պետք է ուղարկվեն անդամ պետություններ՝ հաշվետվության մեջ նշված ժամանակահատվածի սկզբնաժամկետից վեց ամիս առաջ: Հաշվետվությունն ուղարկվում է Հանձնաժողով՝ դրանում սահմանված երեք տարի ժամկետի ավարտից ինն ամսվա ընթացքում:

Անդամ պետություններից զեկույցներ ստանալուց հետո ինն ամսվա ընթացքում Հանձնաժողովը սույն Հրահանգի իրականացման մասին հրապարակում է Համայնքի հաշվետվությունը :

#### **▼M2**

### *Հոդված 16*

#### **Կոմիտեի ընթացակարգը**

Սույն Հրահանգի գիտական և տեխնիկական զարգացման, ինչպես նաև աղբավայրերի հսկողության, նմուշառման և վերլուծության մեթոդների ստանդարտացումը սահմանելու նպատակով ընդունվող հավելվածներն ընդունում է Հանձնաժողովը, որին աջակցում է 2006/12/ԵՀ հրահանգի 18-րդ հոդվածով ստեղծված կոմիտեն: Սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցները պետք է ընդունվեն՝ 17(3) հոդվածում նշված՝ պատշաճորեն իրականացվող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան: Այս նպատակով, II հավելվածի առումով, Կոմիտեն պետք է հաշվի առնի ստուգման և ընդունման չափորոշիչների՝ II հավելվածում ներկայացված ընդհանուր սկզբունքներն ու

ընդհանուր ընթացակարգերը և, կապված աղբավայրերի տեսակների հետ, սահմանի հատուկ չափորոշիչներ և (կամ) ստուգման մեթոդներ ու նմանատիպ սահմանային արժեքներ թափոնների գերեզմանոցների յուրաքանչյուր տեսակի համար՝ անհրաժեշտության դեպքում ներառյալ նաև աղբավայրերի հատուկ տեսակները յուրաքանչյուր տեսակի շրջանակում՝ ներառյալ ստորգետնյա պահեստ-կայանները:

Հանձնաժողովը պետք է, համաձայն 17(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի, ընդունի և, անհրաժեշտության դեպքում նաև փոփոխի 5-րդ, 7-րդ և 11-րդ հոդվածներում նշված վիճակագրական տվյալների ներդաշնակեցման ու կանոնավոր փոխատեղման համար անհրաժեշտ դրույթները:

#### **▼M1**

### *Հոդված 17*

1. Հանձնաժողովին աջակցում է կոմիտեն:

2. Այն դեպքերում, երբ հղում է արվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման (12) 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

#### **▼M2**

3. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) հոդվածը և 7-րդ հոդվածը՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

#### **▼B**

### *Հոդված 18*

#### **Փոխատեղումը**

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգի կատարման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը ոչ ուշ, քան Հրահանգն ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում: Նրանք այդ մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Եթե անդամ պետություններն ընդունում են այդ ակտերը, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Նման հղում կատարելու մեթոդները պետք է սահմանվեն անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի տեքստերը, որոնք ընդունվում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

*Հոդված 19*

**Ուժի մեջ մտնելը**

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում* հրապարակվելու օրվանից:

*Article 20*

**Հասցեատերերը**

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

---

**ԱՂԲԱՎԱՅՐԵՐԻ ԲՈԼՈՐ ԴԱՍԵՐԻ ՀԱՄԱՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

**1. Տեղանքը**

1.1 Աղբավայրի տեղանքը ընտրելիս պետք է հաշվի առնել այն պահանջները, որոնք վերաբերում են՝

վյալ տարածքի սահմաններից դեպի բնակելի և հանգստի գոտիներ, ջրային ուղիներ, ջրային օբյեկտներ և այլ գյուղատնտեսական կամ քաղաքային տարածքներ ընկած հեռավորությանը,

դ տարածքում առկա ստորգետնյա ջրերին, ավիամերձ ջրերին կամ բնության պահպանվող գոտիներին,

րածքի երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները,

րածքում հեղեղների, իջվածքների, սողանքների կամ տարափների ռիսկին,

րածքում բնության կամ մշակութային օբյեկտների պահպանությանը:

1.2. Աղբավայրը կարող է գործելու թույլտվություն ստանալ միայն այն դեպքում, երբ տվյալ գերեզմանոցի առանձնահատկությունները համապատասխանում են վերը նշված պահանջներին կամ ձեռնարկված ուղղիչ միջոցները ցույց են տվել, որ այդ գերեզմանոցը շրջակա միջավայրի համար լուրջ վտանգ չի ներկայացնում:

**2. Ջրերի հսկողությունը և թափոններից ծորացած կեղտաջրերի տնօրինումը**

Կախված աղբավայրերի առանձնահատկություններից և օդերևութաբանական պայմաններից՝ ձեռնարկվում են համապատասխան միջոցներ, որպեսզի հնարավոր լինի

- հսկել տեղումներից առաջացած և աղբավայրեր ներթափանցող ջրերը,
  - կանխել մակերեսային ջրերի և (կամ) ստորգետնյա ջրերի ներթափանցումը դեպի աղբավայրեր,
  - հավաքել աղտոտված ջրերը և թափոններից ծորացած կեղտաջրերը: Եթե աղբավայրերի տեղանքի և ընդունվող թափոնների քննարկման հիման վրա կայացրած գնահատումը ցույց է տալիս, որ գերեզմանոցը ոչ մի վտանգ չի ներկայացնում շրջակա միջավայրի համար, իրավասու մարմինը կարող է որոշել, որ հետևյալ դրույթները չկիրառվեն՝
  - մշակել աղբավայրերից հավաքած աղտոտված ջրերը և թափոններից ծորացած կեղտաջրերը՝ մինչև դրանք համապատասխանեն անվտանգ համարվելու չափանիշներին:
- Վերը թվարկված դրույթները չեն կարող կիրառվել չեզոք թափոնների համար նախատեսված աղբավայրերի նկատմամբ:

**3. Հողի և ջրի պաշտպանությունը**

3.1. Աղբավայրը պետք է տեղակայված և նախագծված լինի այնպես, որ բավարարի

հողը, ստորգետնյա ջրերը կամ մակերեսային ջրերն աղտոտումից պաշտպանելու և, անհրաժեշտության դեպքում, թափոններից ծորացած կեղտաջրերն արդյունավետորեն հավաքելու համար անհրաժեշտ պայմանները՝ համաձայն 2-րդ բաժնի: Հողի, ստորգետնյա և մակերեսային ջրերի պաշտպանությունը պետք է իրականացվի շահագործման (ակտիվ) փուլում՝ երկրաբանական արգելապատնեշի և ստորին շերտի միացմամբ իսկ պասիվ փուլում (փակումից հետո)՝ երկրաբանական արգելապատնեշի և վերին շերտի միացմամբ:

3.2. Երկրաբանական արգելապատնեշը որոշվում է՝ ելնելով ներքևում ներկայացված երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմաններից և կառուցվում է աղբավայրին հարող տարածքում՝ ապահովելով նոսրացման բավարար հնարավորություն, որպեսզի հնարավոր լինի կանխել հողին ու ստորգետնյա ջրերին սպառնացող ռիսկը:

Աղբավայրի հիմքն ու պատերը պետք է կազմված լինեն հանքային շերտից, որը բավարարում է թափանցելիության և հաստության հետ կապված պահանջները և համատեղ ազդեցություն ունի՝ կապված հողի, ստորգետնյա և մակերեսային ջրերի պաշտպանության հետ, և համապատասխանում է ներքոհիշյալ պահանջներից որևէ մեկին՝

...— վտանգավոր աղբավայրեր՝  $K \leq 1,0 \times 10^{-9}$  մ/վ. հաստությունը  $\geq 5$  մ,

— ոչ վտանգավոր աղբավայրեր՝  $K \leq 1,0 \times 10^{-9}$  մ/վ. հաստությունը  $\geq 1$  մ,

— չեզոք թափոնների աղբավայրեր՝  $K \leq 1,0 \times 10^{-7}$  մ/վ. հաստությունը  $\geq 1$  մ,

մ/վ. մետր/վայրկյան.

Եթե երկրաբանական բնական արգելապատնեշը չի բավարարում վերը նշված պայմանները, այն կարող է լրացվել արհեստականորեն և ամրացվել այլ միջոցներով, որոնք համարժեք պաշտպանություն կարող են ապահովել: Արհեստականորեն կառուցված երկրաբանական արգելապատնեշը պետք է ունենա 0,5 մետրից ոչ պակաս հաստություն:

3.3. Ի հավելումն վերևում նկարագրված երկրաբանական արգելապատնեշի, թափոններից ծորացած կեղտաջրերի հավաքման և ջերմամեկուսացման համակարգեր պետք է ավելացվեն՝ համաձայն հետևյալ սկզբունքների, որպեսզի հնարավոր լինի ապահովել, որ աղբավայրերի հատակին հավաքվող, թափոններից ծորացած կեղտաջրերի քանակը հասցվի նվազագույնի՝

<b>Թափոններից ծորացած կեղտաջրերի հավաքումն ու հիմքի ջրամեկուսացու</b>	<b>ոչ վտանգ ավոր</b>	<b>վտա նգավ որ</b>
---	------------------------------	----------------------------

<b>մը</b>		
<b>Աղբավայրի կատեգորիան</b>		
Արհեստական ջրամեկուսիչ շերտ	պահանջվում է	պահանջվում է
Ջրահեռացման շերտ $\geq 0,5$ մ	պահանջվում է	պահանջվում է

Անդամ պետությունները կարող են չեզոք թափոնների համար նախատեսված աղբավայրերի և վերը նշված տեխնիկական առանձնահատկությունների համար ընդհանուր և հատուկ պահանջներ սահմանել:

Եթե իրավասու մարմինը շրջակա միջավայրին սպառնացող հնարավոր վտանգը քննարկելուց հետո որոշում է, որ անհրաժեշտ է կանխել թափոններից ծորացած կեղտաջրերի գոյացումը, կարելի է քննարկել մակերեսի ջերմամեկուսացման հարցը: Մակերեսի ջերմամեկուսացման վերաբերյալ առաջարկությունները հետևյալն են՝

<b>Աղբավայրերի կատեգորիաները</b>	<b>ոչ վտանգավոր</b>	<b>վտանգավոր</b>
Գազահեռացման շերտ	պահանջվում է	չի պահանջվում
Արհեստական ջրամեկուսիչ շերտ	չի պահանջվում	պահանջվում է
Անջրաթափանց հանքային շերտ	պահանջվում է	պահանջվում է
Ջրահեռացման շերտ $> 0,5$ մ	պահանջվում է	պահանջվում է
Հողի վերին շերտ $> 1$ մ	պահանջվում է	պահանջվում է

3.4. Եթե շրջակա միջավայրին սպառնացող ռիսկի գնահատման հիման վրա, որը կատարվել է՝ հաշվի առնելով հատկապես 80/68/ԵՏՀ հրահանգը (13), իրավասու մարմինը որոշում է, համաձայն 2-րդ բաժնի (), որ թափոններից ծորացած կեղտաջրերի հավաքումն ու մշակումն անհրաժեշտ չէ կամ, եթե պարզվել է, որ աղբավայրը հնարավոր ոչ մի վտանգ չի ներկայացնում հողի, ստորգետնյա և մակերեսային ջրերի համար, վերը նշված 3.2 և 3.3 պարբերությունների մեջ նշված պահանջները կարող են համապատասխանաբար նվազեցվել: Չեզոք թափոնների համար նախատեսված աղբավայրերի դեպքում այս պահանջները կարող են հարմարեցվել ազգային օրենսդրությանը:



3.5. Աղբավայրերի թափանցելիության գործակիցը որոշելու համար կիրառվող մեթոդը պետք է մշակվի և հաստատվի սույն Հրահանգի 17-րդ հոդվածում նշված Կոմիտեի կողմից:

#### 4. Գազի հսկողությունը

4.1. Պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ հսկելու համար աղբավայրերից արտանետվող գազի կուտակումը և դրա արտահոսքը աղբավայրից (Հավելված III):

4.2. Աղբավայրերից արտանետվող գազը պետք է հավաքել բոլոր այն աղբավայրերից, որոնք կենսաբանորեն քայքայվող թափոններ են ընդունում, և այդ գազը պետք է մշակվի ու օգտագործվի: Եթե հավաքված գազը հնարավոր չէ օգտագործել էներգիա ստանալու համար, այն պետք է այրել:

4.3. Ըստ 4.2 պարբերության՝ աղբավայրերից արտանետված գազի հավաքումը, մշակումն ու օգտագործումը կատարվում է այնպիսի եղանակով, որը նվազեցնում է շրջակա միջավայրին կամ մարդու առողջությանը սպառնացող վտանգը կամ վատթարացումը:

#### 5. Անհարմարություններ և վտանգներ

Պետք է միջոցներ ձեռնարկել՝ նվազեցնելու համար աղբավայրերից ծագող անհարմարություններն ու վտանգները՝

- տհաճ հոտերի և փոշու արտանետումներ,
- քամու միջոցով տարածվող նյութեր,
- աղմուկ և երթևեկություն,
- թռչուններ, մակաբույծներ և միջատներ,
- միացություններ և աերոզոլներ,
- հրդեհներ:

Աղբավայրը պետք է այնպես հագեցվի սարքավորումներով, որ դրանից արտանետվող աղբը չտարածվի հանրային ճանապարհների և շրջակա հողատարածքների վրա:

#### 6. Կայունություն

Թափոնների տեղադրումը դրա համար նախատեսված վայրում պետք է իրականացնել այնպես, որ հնարավոր լինի ապահովել թափոնների զանգվածի, ինչպես նաև դրանց վերաբերող կառույցների կայունությունը՝ մասնավորապես, երբ խոսքը վերաբերում է շերտերի սողանքների կանխմանը: Եթե արհեստական արգելապատնեշ է տեղադրվում, ապա, հաշվի առնելով աղբավայրերի՝ մորֆոլոգիական տեսանկյունից ուսումնասիրությունը, պետք է երկրաբանական

հիմքն այնքան ամուր լինի, որ անհնար լինի նստվածքակալումը, որը կարող է վնասել այդ պատնեշին:

#### 7. Արգելապատնեշներ

Աղբավայրի տարածքը պետք է պաշտպանված լինի ազատ ելումուտից: Ոչ աշխատանքային ժամերին դարպասները պետք է փակ լինեն: Յուրաքանչյուր կառուցվածքի վերահսկման և մուտքի ապահովման համակարգը պետք է ունենա միջոցառումների ծրագիր, որը կօգնի հայտնաբերելու և կանխելու այդ կառուցվածքներում թափոնների ապօրինի թափումը:

---

**ԹԱՓՈՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐՆ ՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ**

**1. Ներածություն**

Սույն Հավելվածը նկարագրում է՝

— տարբեր դասերի աղբավայրում թափոնների ընդունման ընդհանուր սկզբունքները: Թափոնների դասակարգման հետագա ընթացակարգը պետք է հիմնվի այս սկզբունքների վրա՝

— ուղեցույցների, որոնք ներկայացնում են թափոնների ընդունման նախնական ընթացակարգերը, որոնց պետք է հետևել՝ մինչև մշակվի թափոնների դասակարգման և ընդունման ընդհանուր ընթացակարգ: Այս ընթացակարգը, նմուշառման համապատասխան ընթացակարգի հետ միասին, պետք է մշակի սույն Հրահանգի 16-րդ հոդվածում նշված տեխնիկական կոմիտեն: Տեխնիկական կոմիտեն պետք է չափորոշիչներ մշակի որոշ վտանգավոր թափոնների համար, որոնք ընդունվում են ոչ վտանգավոր թափոնների համար նախատեսված աղբավայրերում: Այս չափորոշիչները պետք է, մասնավորապես, հաշվի առնեն նման թափոնների առանձնահատկությունները՝ կապված կարճ, միջին և երկար ժամկետներում դրանցից ծորացող կեղտաջրերի հետ: Այս չափորոշիչները պետք է մշակվեն սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում: Տեխնիկական կոմիտեն պետք է մշակի նաև չափորոշիչներ, որոնք պետք է բավարարվեն ստորգետնյա պահեստ-կայաններում պահվելու համար նախատեսված թափոնների մասով: Այս չափանիշները պետք է, մասնավորապես, հաշվի առնեն, որ թափոնները չպետք է ռեակցիայի մեջ մտնեն իրար հետ և ժայռային ապարների հետ շփվելիս: Տեխնիկական կոմիտեի ձեռնարկած աշխատանքը՝ բացառությամբ սույն Հրահանգի հավելվածներում նշված հսկողության, նմուշառման և վերլուծության մեթոդների ստանդարտացման վերաբերյալ արված առաջարկների, որոնք պետք է ընդունվեն սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում, պետք է ավարտին հասցվի սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց հետո երեք տարվա ընթացքում, և դա պետք է կատարվի՝ հաշվի առնելով սույն Հրահանգի 1-ին հոդվածում առաջ քաշված նպատակները:

**2. Ընդհանուր սկզբունքներ**

Թաղման ենթակա թափոնների բաղադրությունը, դրանցից ծորացող կեղտաջրերի քանակությունը, երկարատև առանձնահատկությունները և ընդհանուր հատկությունները պետք է հնարավորինս հստակ իմանալ: Թափոնների ընդունումը աղբավայր կարող է հիմնված լինել ինչպես թափոնների ընդունման կամ մերժման ցուցակների վրա, որոնք որոշվում են՝ կախված թափոնների բնույթից և ծագումից, այնպես էլ թափոնների վերլուծության մեթոդներից ու ընդունվող թափոնների առանձնահատկությունների սահմանային արժեքներից: Թափոնների ընդունման նոր ընթացակարգերը, որոնք նկարագրված են սույն Հրահանգում, պետք է հնարավորինս հիմնված լինեն թափոնների վերլուծության ստանդարտացված մեթոդների և ընդունվող թափոնների առանձնահատկությունների սահմանային արժեքների վրա:

Նախքան վերլուծության այդ մեթոդները և սահմանային արժեքները որոշելը՝ անդամ պետությունները պետք է առնվազն կազմեն յուրաքանչյուր դասի աղբավայրում ընդունվող կամ մերժվող թափոնների ազգային ցուցակները կամ սահմանեն այդ ցուցակներում պահանջվող չափորոշիչները: Որպեսզի թափոնն ընդունվի որոշակի դասի աղբավայրում, թափոնի այդ տեսակը պետք է ընդգրկված լինի ազգային ցուցակում կամ բավարարի այդ ցուցակում պահանջվող համապատասխան չափորոշիչները: Այս ցուցակները կամ համապատասխան չափորոշիչները, ինչպես նաև վերլուծության մեթոդներն ու սահմանային արժեքները պետք է Հանձնաժողով ուղարկվեն սույն Հրահանգի փոխատեղումից հետո վեց ամսվա ընթացքում կամ երբ դրանք կընդունվեն ազգային մակարդակով:

Այս ցուցակները կամ ընդունման չափորոշիչները պետք է օգտագործվեն թափոնները տեղավորելու համար կոնկրետ վայրերի ցուցակները կազմելու նպատակով, այսինքն՝ սույն Հրահանգի 9-րդ հոդվածի համաձայն տրված թույլտվության մեջ նշված ընդունվող թափոնների ցուցակները:

Թափոնների ընդունման չափորոշիչները, որոնք համապատասխանում են տեղեկագիր ցուցակներին կամ աղբավայրի դասին, կարող են հիմնվել այլ օրենսդրության և (կամ) թափոնների առանձնահատկությունների վրա:

Որոշակի աղբավայրում թափոնների ընդունման չափորոշիչները պետք է բխեն այնպիսի ուսումնասիրություններից, որոնք վերաբերում են՝

- շրջակա միջավայրի պաշտպանությանը (մասնավորապես՝ ստորգետնյա և մակերեսային ջրերին),
- շրջակա միջավայրի պաշտպանության համակարգերի պաշտպանությանը (օրինակ՝ միջնորմերն ու թափոններից ծորացած կեղտաջրերի մշակման համակարգերը),
- աղբավայրերի սահմաններում թափոնների կայունացման ցանկալի գործընթացների պաշտպանությանը,
- մարդու առողջությանը սպառնացող վտանգի կանխմանը:  
Թափոնների առանձնահատկությունների վրա հիմնված չափորոշիչների օրինակները հետևյալն են՝
- ամբողջական կազմության վերաբերյալ գիտելիքի պահանջ,
- թափոնների մեջ օրգանական նյութերի քանակության սահմանափակումներ,
- թափոններում առկա օրգանական բաղադրիչների կենսաբանորեն քայքայվելու հատկության վերաբերյալ պահանջներ կամ սահմանափակումներ,
- նշված, հնարավոր վնասակար/վտանգավոր բաղադրիչների (համաձայն վերը նշված պաշտպանության չափորոշիչների) քանակության սահմանափակումներ,
- նշված, հնարավոր վնասակար/վտանգավոր բաղադրիչների (համաձայն վերը նշված պաշտպանության չափորոշիչների)՝ իրենցից կեղտաջրեր արտազատելու հնարավոր և ակնկալվող հատկության վերաբերյալ սահմանափակումներ,
- թափոնների և դրանցից ծորացող կեղտաջրերի էկոթունաբանական հատկություններ:

Թափոնների ընդունման չափորոշիչները, որոնք հիմնված են առանձնահատկությունների հիման վրա, պետք է ավելի շատ տարածվեն չեզոք թափոնների համար նախատեսված աղբավայրերի վրա, ավելի քիչ՝ ոչ վտանգավոր թափոնների համար նախատեսված աղբավայրերի վրա և ամենաքիչը՝ վտանգավոր թափոնների համար նախատեսված աղբավայրերի վրա՝ ելնելով վերջին երկու տեսակի աղբավայրերի շրջակա միջավայրի պաշտպանություն բարձր մակարդակից:

### 3. Թափոնների ստուգման և ընդունման ընդհանուր ընթացակարգերը

Թափոնների ընդհանուր բնութագրումն ու ստուգումը պետք է հիմնված լինեն հետևյալ եռաստիճան ստորակարգության վրա՝

#### Փուլ 1

Հիմնական բնութագիրը. սա իրենից ներկայացնում է թափոններին բնորոշ առանձնահատկությունների և (կամ) կարճ ու երկար ժամկետներում դրանցից կեղտաջրեր ծորալու հատկության մանրակրկիտ սահմանում՝ համաձայն վերլուծության և առանձնահատկությունների ստուգման ստանդարտացված մեթոդների:

#### Փուլ 2

Համապատասխանության ստուգում. սա իրենից ներկայացնում է վերլուծության և թափոնների առանձնահատկությունների ստուգման ստանդարտացված ավելի պարզ մեթոդներով պարբերաբար ստուգում՝ պարզելու, թե արդյոք տվյալ թափոնը բավարարում է թույլտվության պայմանները և (կամ) հատուկ տեղեկագրի չափորոշիչները: Ստուգման աշխատանքները շեշտը դնում են հիմնական բնութագրերի արդյունքում պարզված փոփոխականության և հատկությունների վրա:

#### Փուլ 3

Ստուգում տեղում. այս գործընթացն իրենից ներկայացնում է ստուգման արագ մեթոդներ՝ նպատակ ունենալով հաստատելու, որ այդ թափոնը այն նույն թափոնն է, որը պետք է ենթարկվեր համապատասխանության ստուգման և որը նկարագրված է թափոններին կցված փաստաթղթերում: Ստուգումը կարող է բաղկացած լինել թափոնների բեռի միայն տեսողական զննությունից, որն իրականացվում է աղբավայրում բեռը դատարկելուց առաջ և հետո:

Թափոնների առանձին մի տեսակ պետք է սովորաբար բնութագրվի 1-ին փուլի հիման վրա և բավարարի համապատասխան չափորոշիչները, որպեսզի ընդունվի՝ համաձայն տեղեկագիր ցուցակի: Որպեսզի թափոնների առանձին տեսակը շարունակի մնալ տվյալ աղբավայրի համար կազմված ցուցակում, այն պետք է հստակ պարբերականությամբ (օրինակ՝ տարեկան) ստուգվի 2-րդ փուլի համաձայն և բավարարի համապատասխան չափորոշիչները: Թափոնների յուրաքանչյուր բեռ, որը հասնում է աղբավայրի դարպասներին, պետք է ենթարկվի 3-րդ փուլով նախատեսված ստուգման:

Որոշ տեսակի թափոններ կարող են անընդհատ կամ ժամանակավոր ազատվել 1-ին փուլով սահմանված ստուգումից: Դա կարող է արվել՝ կապված ստուգման համար գոյություն ունեցող ընթացակարգերի և ընդունման չափորոշիչների

անհամապատասխանության պատճառով ստուգման անցկացման անհնարիության կամ անկատար օրենսդրության հետ:

#### 4. Ուղեցույցներ՝ թափոնների ընդունման նախնական ընթացակարգերի համար

Մինչև սույն Հավելվածի ավարտը պարտադիր է միայն 3-րդ փուլով նախատեսված ստուգումը իսկ 1-ին և 2-րդ փուլերը կիրառվում են այնքանով, որքանով դրա կարիքը կա: Նախնական փուլում հատուկ տեսակի աղբավայրերում ընդունվելու համար նախատեսված թափոնները պետք է ընդգրկված լինեն կամ այդ հատուկ տեսակի աղբավայրերի համար կազմված ազգային սահմանափակող ցուցակում կամ տվյալ վայրում ընդունվող թափոնների համար կազմված ցուցակում կամ բավարարեն համապատասխան չափորոշիչները, որն այդ ցուցակում ընդգրկվելու հնարավորություն կտա:

Հետևյալ ընդհանուր ուղեցույցները կարող են օգտագործվել կազմելու համար թափոնների՝ հիմնական երեք դասի աղբավայրերում ընդունվելու կամ համապատասխան ցուցակներում ընդգրկվելու նախնական չափորոշիչները:

Չեզոք թափոնների համար նախատեսված աղբավայրեր՝ միայն 2(ե) հոդվածով որոշված չեզոք թափոնները կարող են ընդգրկվել այս ցուցակում:

Ոչ վտանգավոր թափոնների համար նախատեսված աղբավայրեր՝ այս ցուցակում ընդգրկվելու համար թափոնի այդ տեսակը չպետք է կարգավորվի 91/689/ԵՏՀ հրահանգով:

Վտանգավոր թափոնների համար նախատեսված աղբավայրեր՝ վտանգավոր թափոնների համար նախատեսված աղբավայրերի համար կազմված նախնական, ոչ ճշգրիտ ցուցակը կարող է ընդգրկել միայն այն տեսակի թափոնները, որոնք կարգավորվում են 91/689/ԵՏՀ հրահանգով: Սակայն նման տեսակի թափոնները, այնուամենայնիվ, չպետք է ընդգրկվեն ցուցակներում, մինչև չենթարկվեն նախնական մշակման, եթե դրանք ամբողջովին բաղկացած են վտանգավոր բաղադրիչներից կամ դրանցից կարող են ծորալ վտանգավոր կեղտաջրեր, որոնց քանակը բավականին բարձր է՝ կարճաժամկետ մասնագիտական կամ բնապահպանական ռիսկի հանգեցնելու կամ աղբավայրի փորձնական գործողության ժամկետում թափոնների բավարար կայունացումը կանխելու համար:

#### 5. Թափոնների նմուշառումը

Բազմաթիվ թափոնների հետերոգեն բնույթի պատճառով թափոնների նմուշառումը կարող է լուրջ խնդիրներ առաջացնել թափոնները ներկայացնելու և դրանց համար կիրառվող տեխնիկաների համար: Անհրաժեշտ է մշակել թափոնների նմուշառման եվրոպական ստանդարտ: Քանի դեռ անդամ պետությունները չեն հաստատել այդ ստանդարտը՝ համաձայն սույն Հրահանգի 17-րդ հոդվածի, անդամ պետությունները կարող են կիրառել ազգային ստանդարտներն ու ընթացակարգերը:

ՀԱՎԵԼՎԱԾ III

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՋՈՐԴՈՂ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՓՈԻԼԵՐՈՒՄ

ՀՄԿՄԱՆ ԵՎ ՍՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

1. Ներածություն

Սույն Հավելվածի նպատակը մոնիտորինգի համար նվազագույն ընթացակարգեր տրամադրելն է, որն անցկացվում է՝ ստուգելու համար, որ

- թափոնները թաղման նպատակով ընդունվել են՝ համաձայն տվյալ աղբավայրի կատեգորիայի համար սահմանված չափորոշիչների,
- աղբավայրի տարածքում անցկացվող գործողություններն իրականացվում են ցանկալի ձևով,
- շրջակա միջավայրի պաշտպանության համակարգերն ամբողջությամբ գործում են նախատեսված ձևով,
- աղբավայրերի համար տրված թույլտվության փաստաթղթերում նշված պայմանները բավարարվում են:

2. Օդերևութաբանական տվյալներ

Համաձայն իրենց հաշվետվողականության պարտավորությունների (հոդված 15)՝ անդամ պետությունները պետք է տեղեկություններ տրամադրեն օդերևութաբանական տվյալների հավաքման մեթոդի վերաբերյալ: Թե ինչպես պետք է հավաքել տվյալները (տեղում, ազգային օդերևութաբանական ցանցից և այլն), որոշում են անդամ պետությունները:

Եթե անդամ պետությունները որոշեն, որ ջրային հաշվեկշիռը արդյունավետ միջոց է՝ գնահատելու համար թափոններից ծորացած կեղտաջրերի մակարդակը աղբավայրում կամ դրա ներթափանցումը աղբավայրի տարածք, խորհուրդ է տրվում այդ մասին տվյալները հավաքել տվյալ աղբավայրի մոնիտորինգի միջոցով կամ մոտակա օդերևութաբանական կայանից այնքան ժամանակ, որքան պահանջում է իրավասու մարմինը՝ համաձայն սույն Հրահանգի 13 (գ) հոդվածի:

	Գործառնական փուլը	Վերականգնման փուլ
1.1. 1.1. Տեղումների ծավալը	օրական	օրական, ավելացվում է ամսական արժեքներին
1.2. 1.2. Ջերմաստիճանը (նվազագույն, առավելագույն, Կենտրոնական եվրոպական ժամանակով 14.00–ին)	օրական	միջին ամսական

<b>1.3. 1.3. Գերիշխող քանու ուղղությունն ու ռիսկերը</b>	օրական	անհրաժեշտ չէ
<b>1.4. 1.4. Ջրագրկում (հիդրոմետրիկ սարքավորում)(1)</b>	օրական	օրական, ավելացվում է ամսական արժեքներին
<b>1.5. 1.5. Մթնոլորտային խոնավություն (ԿԵԾ-ով 14.00-ին)</b>	օրական	միջին ամսական
1) Կամ համապատասխան այլ մեթոդներով:		

3. Տվյալներ արտանետումների վերաբերյալ՝ ջրի, թափոններից ծորացած կեղտաջրերի և գազի վերահսկում Առկայության դեպքում թափոններից ծորացած կեղտաջրերի և մակերեսային ջրերի նմուշառումը պետք է իրականացվի հատուկ կետերից հավաքած նմուշներով: Թափոններից ծորացած կեղտաջրերի նմուշառումն ու չափումները (կապված դրանց ծավալի և բաղադրության հետ) պետք է իրականացվեն առանձին՝ աղբավայրի յուրաքանչյուր կետում, որտեղ կեղտաջուր է հայտնաբերվել: Հղում՝ ընդհանուր ուղեցույցներ նմուշառման տեխնոլոգիայի վերաբերյալ, ISO 5667-2 (1991թ.): Առկա մակերեսային ջրերի մոնիտորինգը պետք է անցկացվի ոչ պակաս, քան երկու կետում՝ մեկը աղբավայրից դեպի վերև ընթացող ուղղությամբ, մյուսը՝ դեպի ներքև:

Գազի մոնիտորինգը պետք է անցկացվի աղբավայրի յուրաքանչյուր բաժնի համար: Նմուշառման և վերլուծության հաճախականության մասին տեղեկությունները ներկայացված են հետևյալ աղյուսակում: Թափոններից ծորացած կեղտաջրերի և ջրերի մասով մոնիտորինգի համար ընտրվում է միջին բաղադրության նմուշ:

Նմուշառման հաճախականությունը որոշվում է ըստ թաղված թափոնների մորֆոլոգիայի (գերեզմանաթմբի մեջ, հողում թաղված և այլն): Հաճախականության մասին հատուկ նշվում է թույլտվության փաստաթղթերում:

	<b>Գործառնական փուլ</b>	<b>Վերականգնման փուլ (3)</b>
<b>2.1. Թափոններից ծորացած կեղտաջրերի ծավալը</b>	ամեն ամիս (1) (3)	յուրաքանչյուր վեց ամիսը մեկ
<b>2.2. Թափոններից ծորացած կեղտաջրերի բաղադրությունը (2)</b>	ամեն եռամսյակ (3)	յուրաքանչյուր վեց ամիսը մեկ
<b>2.3. Մակերեսային ջրերի</b>	ամեն եռամսյակ (3)	յուրաքանչյուր վեց



ծավալն ու բաղադրությունը (7)		ամիսը մեկ
<b>2.4. Գազի հնարավոր արտանետումները և մթնոլորտային ճնշումը (4) (CH<sub>4</sub>, CO<sub>2</sub>, O<sub>2</sub>, H<sub>2</sub>S, H<sub>2</sub>, և այլն)</b>	ամեն ամիս (3) (5)	յուրաքանչյուր վեց ամիսը մեկ(6)
<p>1) Նմուշառման հաճախականությունը որոշվում է ըստ թաղված թափոնների մորֆոլոգիայի (գերեզմանաթմբի մեջ, հողում թաղված և այլն): Հաճախականության մասին հատուկ նշվում է թույլտվության փաստաթղթերում:</p> <p>2) Չափման ենթակա պարամետրերը և վերլուծության ենթակա նյութերը փոփոխվում են՝ կախված թաղված թափոնների բաղադրությունից. դրանք պետք է նշված լինեն թույլտվության փաստաթղթերում և արտացոլեն թափոններից կեղտաջրեր ծորալու առանձնահատկությունները:</p> <p>3) Եթե տվյալների գնահատումը ցույց է տալիս, որ ավելի երկար ինտերվալները նույնքան արդյունավետ են, դրանք կարող են ընդունվել: Թափոններից ծորացող կեղտաջրերի մասով հաղորդականությունը պետք է միշտ չափվի առնվազն տարեկան մեկ անգամ:</p> <p>4) Այս չափումները հիմնականում կապված են թափոններում օրգանական նյութերի առկայության հետ:</p> <p>5) CH<sub>4</sub>, CO<sub>2</sub>, O<sub>2</sub> միշտ, իսկ հարկ եղած դեպքում նաև այլ գազեր՝ համաձայն թաղված թափոնների բաղադրության՝ նպատակ ունենալով արտացոլելու այդ թափոններից կեղտաջրերի ծորալու հատկությունները:</p> <p>6) Գազահանման համակարգի արդյունավետությունը պետք է պարբերաբար ստուգվի:</p> <p>7) Ելնելով աղբավայրի առանձնահատկություններից՝ իրավասու մարմինը կարող է որոշում կայացնել, որ կարիք չկա իրականացնելու այս չափումները և պետք է համապատասխանաբար գեկուցի այդ մասին՝ համաձայն հրահանգի 15-րդ հոդվածի:</p> <p>2.1 և 2.2 կետերը կիրառվում են միայն այն վայրերում, որտեղ թափոններից ծորացած կեղտաջրերի կուտակումներ են տեղի ունենում (տե՛ս հավելված I (2)):</p>		

#### 4. Ստորգետնյա ջրերի պաշտպանությունը

##### Ա. Նմուշառումը

Չափումները պետք է իրականացվեն այնպես, որ թափոնների տեղադրման հետևանքով ստորգետնյա ջրերի վրա ազդեցության մասին տեղեկություններ տրամադրեն. չափումները պետք է իրականացվեն ստորգետնյա ջրերի ներհոսքի առնվազն մեկ, իսկ արտահոսքի դեպքում՝ երկու կետում: Այս թվերը կարող են աճել՝ հիդրոերկրաբանական հատուկ հետազոտությունների և թափոններից ծորացած կեղտաջրերի՝ դեպի ստորգետնյա ջրեր անկանխատեսելի ներթափանցումն անհապաղ կանխելու անհրաժեշտության հիման վրա:

Նմուշառումը պետք է իրականացվի առնվազն երեք տեղում՝ նախքան լցնելու գործընթացը, որպեսզի հետագա նմուշառման համար հնարավոր լինի սահմանել սահմանային արժեքները: Հղում՝ ստորգետնյա ջրերի նմուշառում, ISO 5667, Մաս 11, 1993թ.:

##### Բ. Մոնիտորինգ

Վերցված նմուշների վերլուծության ենթակա պարամետրերը որոշվում են տվյալ վայրի թափոններից ծորացած կեղտաջրերի հնարավոր բաղադրության և ստորգետնյա ջրերի որակի հիման վրա: Վերլուծության պարամետրեր ընտրելիս պետք է հաշվի առնել շարժունակությունը ստորգետնյա գոտում: Պարամետրերը կարող են ներառել ցուցիչ պարամետրեր, որպեսզի հնարավոր լինի ապահովել ջրի որակի փոփոխության արագ հայտնաբերումը <sup>(14)</sup>:

	Գործառնական փուլ	Վերականգնման փուլ
<b>Ստորգետնյա ջրերի մակարդակը</b>	յուրաքանչյուր վեց ամիսը մեկ (1)	յուրաքանչյուր վեց ամիսը մեկ (1)
<b>Ստորգետնյա ջրերի բաղադրությունը</b>	Հաճախականությո ունը որոշվում է՝ ելնելով վայրի պայմաններից (2) (3)	Հաճախականությո ունը որոշվում է՝ ելնելով վայրի պայմաններից (2) (3)
<p>1) Այն տեղերում, որտեղ ստորգետնյա ջրերի մակարդակները տատանվում են, հաճախականությունը պետք է մեծացնել:</p> <p>2) Հաճախականությունը պետք է հիմնված լինի երկու նմուշառման միջև ուղղիչ գործողությունների հավանականության վրա, եթե սահմանային թույլատրելի մակարդակը բավարար է, այսինքն՝</p>		

հաճախականությունը պետք է որոշվի ստորգետնյա ջրերի հոսքի արագության գնահատման և դրա մասին գիտելիքների հիման վրա:

3) Եթե սահմանային թույլատրելի մակարդակը բավարար է (տես Գ. կետը), անհրաժեշտ է ստուգում՝ կատարված նմուշառումների կրկնությամբ: Եթե մակարդակը հաստատվել է, պետք է շարժվել անկանխատեսելի դեպքերի համար մշակված պլանով (այս մասին նշված է թույլտվության փաստաթղթերում):

#### Գ. Սահմանային թույլատրելի մակարդակներ

Պետք է հաշվի առնել սույն Հրահանգի 12-րդ և 13-րդ հոդվածներում նշված էական բացասական ազդեցությունները շրջակա միջավայրի վրա, որոնք կարող են առաջանալ, երբ ստորգետնյա ջրերից վերցված նմուշի վերլուծությունը ջրի որակի էական փոփոխություն է բացահայտում: Սահմանային թույլատրելի մակարդակը պետք է որոշվի՝ հաշվի առնելով աղբավայրի տեղանքի հիդրոերկրաբանական հատուկ գոյացություններն ու ստորգետնյա ջրերի որակը: Սահմանային թույլատրելի մակարդակը պետք է նշվի թույլտվության փաստաթղթում ամեն անգամ, երբ դա հնարավոր է:

Նվազող ճնշման ամեն մի սանդղակի համար դիտարկումները պետք է գնահատվեն վերահսկողության դիագրամների միջոցով՝ վերահսկողության սահմանված կանոններով և մակարդակներով: Հսկողության մակարդակները պետք է որոշվեն՝ ելնելով ստորգետնյա ջրերի որակի տեղային փոփոխություններից:

#### 5. Տարածքի տեղագրություն. Տվյալներ աղբավայրի վերաբերյալ

	Գործառնական փուլ	Վերականգնման փուլ
5.1. Աղբավայրերի կառուցվածքը և կազմը (1)	տարեկան	
5.2. Աղբավայրի մակարդակի առանձնահատկությունների սահմանումը	տարեկան	տարեկան
1) Տվյալներ աղբավայրի կարգավիճակի պլանավորման համար՝ թափոնների զբաղեցրած մակերեսը, թափոնների		

ծավալն ու բաղադրությունը, թաղման մեթոդները, թաղման ժամանակն ու տևողությունը, աղբավայրի դեռ չզբաղեցված տարողունակության հաշվարկումը:

- 1) ՊՏ C 156, 24.05.1997., էջ 10:
- 2) ՊՏ C 355, 21.11.1997թ., էջ 4:
- 3) Եվրոպական պառլամենտի 1998 թվականի փետրվարի 19-ի եզրակացություն (ՊՏ C 80, 16.03.1998թ., էջ 196), Խորհրդի 1998 թվականի հունիսի 4-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 333, 30.10.1998թ., էջ 15) և Եվրոպական պառլամենտի 1999 թվականի փետրվարի 3-ի որոշում (ՊՏ C 150, 28.05.1999թ. էջ 78):
- 4) ՊՏ C 122, 18.05.1990թ., էջ 2:
- 5) ՊՏ L 194, 25.07.1975թ., էջ 39: Հանձնաժողովի թիվ 96/350/ԵՀ (ՊՏ L 135, 06.06.1996թ., էջ 32) որոշումով վերջին անգամ փոփոխված հրահանգ:
- 6) ՊՏ L 257, 10.10.1996թ., էջ 26:
- 7) ՊՏ L 377, 31.12.1991թ., էջ 20: Թիվ 94/31/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 168, 02.07.1994թ., էջ 28):
- 8) ՊՏ L 175, 05.07.1985թ., էջ 40: Թիվ 97/11/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 73, 14.03.1997թ., էջ 5):
- 9) ՊՏ L 158, 23.06.1990թ., էջ 56:
- 10) ՊՏ L 30, 06.02.1993թ., էջ 1: Թիվ 120/97 (ԵՀ) կանոնակարգով փոփոխված կանոնակարգ (ՊՏ L 22, 24.01.1997թ., էջ 14):
- 11) ՊՏ L 377, 31.12.1991թ., էջ 48:
- 12) Հանձնաժողովին վերապահված՝ կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999 թ., էջ 23):
- 13) ՊՏ L 20, 26.01.1980թ., էջ 43: Թիվ 91/692/ԵՏՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 377, 31.12.1991թ., էջ 48):
- 14) Առաջարկված պարամետրերը՝ Ph, ցեմենտի վերին շերտ, ֆենոլներ, ծանր մետաղներ, ֆլյուորիդ, AS, նավթ/ածխաջրածիններ: